Արձանագրություն N2

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/7.» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացվող գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի աճուրդի արդյունքների ամփոփման նիստի

ք. Երևան

20 սեպտեմբերի 2018թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Ս. Մարգարյան, Հ. Գրեկյան, Ա. Ղազարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան

1. Աճուրդի մասնակիցների կողմից ներկայացվող հայտերի վերաբերյալ

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/7.» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը տեղի է ունեցել 18.09.2018թ. ժամը 10:00-ին:

2. Էլեկտրոնային աճուրդը սկսելու վերաբերյալ

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ ս. թ. սեպտեմբերի 20-ին ժամը 10:00-ին:

3. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը) և էլեկտրոնային հասցեն

Հ/հ	Մասնակցի անվանումը	Էլ. հասցե
1	Ա/Ձ Սիլվա Յոլչյան	tender1955@mail.ru

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Մասնակիցներ	Չափաբաժին 1						Նախահաշվային գներ
	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			
	ԳԻՆ	ԱԱՀ	Գին ԱԱՀ-ով	ԳԻՆ	ԱԱՀ	Գին ԱԱՀ-ով	
Ա/Ձ Սիլվա Յոլչյան	200000	0	200000	200000	0	200000	200000

5. Տվյալներ՝ էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Սիլվա Յոլչյանի (այսուհետ նաև՝ Ա/Ձ) կողմից հայտի հավելված N 1 դիմում-հայտարարությունը ներկայացվել է հրավերով սահմանված կարգով, ուստի աճուրդի ամփոփման արդյունքում վերջինիս հայտարարել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետով համակարգի միջոցով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

7. ՀՀ ԿԱ պետական եկամուտներ հարցում ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 28.09.2018թ. ժամը 10:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Մարգարյան

_____ Հ. Գրեկյան

_____ Ա. Ղազարյան

Քարտուղար՝ _____ Ա. Գրիգորյան